



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱԶԱՆ ՀՕՐ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

**Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ՝
 ԼՈՅՍԻ ՈՒ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿ**

*«...Իսկ եկեալ սուրբ կանանցն ի խընկել զմարմինըն Տեանն.
 Եւ լըուեալ ի հրեշտակէն
 եթէ յարեաւ ի մեռելոց կենդանին յաւիտենից»:
 (ՇԱՐԱԿԱՆ)*

Քրիստոնեայ աշխարհը ահա անգամ մը եւս կ'ապրի հոգեկան ցնծութեան ու անգերազանցելի հրճուանքի պահ մը, տօնելով Աստուածորդւոյն Ս. Յարութիւնը:

Հաւատացեալ մարդկութիւնը այսօր անգամ մը եւս ականջալուր կ'ըլլայ իւղաբեր կիներուն ուղղուած հրեշտակներու ատեփսին.

***«Ինչո՞ւ ողջը մեռելներուն մէջ կը փնտռէք:
 Հոս չէ՛ Ան. յարութի՛նն առաւ»*** (Ղուկաս, 24:5-6):

Սարսափազդու դեպքերէ եւ անդոհանքով պարուրուած անձկագին օրերէ ետք, ի՛նչ երանական պահ՝ այս ատեփսը ստացողներուն համար:

Անժամանցելի ի՛նչ պատգամ՝ 20 դարեր ետք մահուան դիմաց կեանքի՛ ատեփսը ստացողներուս:

Արդարեւ, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի երկրաւոր առաքելութեան իւրաքանչիւր դրուագը, բայց մանաւանդ Անոր հրաշալի յարութեան դեպքը կը բովանդակեն անսպառ խորհուրդներ, որոնք չեն մաշիր ժամանակի թաւալումով, չեն սպառիր դարերու սահանքին հետեւանքով, այլ տարուէ տարի նոյն թարմութեամբ եւ նոյն բազմախորհուրդ արժէքներով կը վերադառնան հաւատացեալ մարդուն, իբրեւ մնայուն պատգամ եւ ուղեցոյց՝ լուսաւորելու մեր կեանքը, մեզ առաջնորդելու յաւիտենութեան:

Եկեք, պահ մը վերապրինք այդ հրաշալի պահը: Յիշողութեամբ վերադառնանք Յիսուսի աշխարհ առաքելութեան, բայց մանաւանդ Անոր երկրաւոր կեանքին վերջին օրերուն, որոնք կը կազմեն Անոր առաքելութեան թագադրումը, Անոր պատգամներուն պսակադրումը:

Յիսուսի Երուսաղէմ յաղթական մուտքէն մինչեւ Անոր մատնութիւնը, ձերբակալումը, դատավարութիւնը, խաչելութիւնը, թաղումը ու հրաշալի յարութիւնը կը կազմեն զիրար ամբողջացնող դիպաշար մը, որ մարդուն հանդէպ Աստուածային սիրոյն լիակատար եւ շօշափելի արտայայտութեան խտացումն է:

Աստուծմէ հեռացած եւ աստուածային շնորհքէ պարպուած օրինազանց մեղաւոր մարդուն համար մեր Երկնաւոր Յայրը, անգամ մը եւս գերագոյն զոհողութիւն յանձն առնելով, կը կատարէր փրկութեան իր խոստումը: Ան աշխարհ ղրկած էր իր Միածինը, ո՛չ թէ դատապարտելու աշխարհը, այլ իր ուսերուն առնելու մեղաւոր մարդուն մեղքերը, եւ որպէս Գառն Աստուծոյ՝ իր անարատ արիւնով քաւելու զանոնք: Որովհետեւ, **«Աստուած մեզի հանդէպ իր սերը յայտնեց անով՝ որ երբ տակաւին մեր մեղքերուն մէջ էինք, Քրիստոս մեզի համար մեռաւ»** (Յռովմայեցիս, 5:8):

Յիսուսի փրկչագործութեան առաքելութիւնը, սակայն, իր վախճանին պիտի չհասներ իր անմեղ արեան հեղումով: Անոր կեանքը վերջ պիտի չգտներ խաչին վրայ իր բազուկներուն տարածումով ու չարչարալից մահով, որովհետեւ այդպէսով, աստուածային խոստումը լինելութեան հասած պիտի չըլլար:

Քրիստոսի նոր պատուիրաններն ու երկինքի արքայութեան ուսուցումները նկատի չունէին միայն աշխարհիկ՝ ժամանակաւոր կեանքը, այլ անոնց նպատակն էր մեղաւոր մարդը պատրաստել հանդերձեալ, յաւիտենական կեանքին, ժամանակաշրջանի մը, որ չի սահմանափակուիր աշխարհի վրայ մեր կարճատեւ կեանքով, այլ մահէն անդին տարածուող յաւիտենականութեամբ: **«Լաւ գիտցէք, ով որ իմ խօսքերս կը լսէ եւ կը հաւատայ Անոր՝ որ զիս ղրկեց, յաւիտենական կեանք ունի եւ պիտի չդատապարտուի, որովհետեւ արդէն իսկ մահէն կեանքի անցած է»** (Յովհաննէս 5: 24):

«Ծն եկայ որ կեանք ունենաք եւ առաւել կեանք ունենաք» (Յովհաննէս 10:10):

Խաչելութենէն երեք օր ետք, Յիսուսի յարութեան հրաշալի դէպքը երկնատուր այս պատգամին գործնական արտայայտութիւնն էր:

Իր յարութեամբ՝ Յիսուս վերջնական յաղթանակը կը տանէր մահուան ու անհետ կորսուելու վտանգին վրայ:

Քրիստոսի մահուան վրայ տարած կեանքի յաղթանակով է որ մենք **«մահէն կեանքի անցած ենք»** (Ա. Յովհաննէս 3:14):

Յարութիւնը, սիրելիներ, բարիին յաղթանակն է չարին վրայ, մեղքերէ ձերբազատելու, փրկչագործութեան արտայայտութիւնը, որ իբրեւ պատգամ կը տրուի մեղաւոր մարդուն: Հաւատքով լեցուած ու Յարութեան աւիշով սպառնազինուած մարդը իրաւամբ կրնայ ըսել. **«Ո՛ր է, մա՛հ, յաղթանակդ. ո՛ր է մա՛հ, քու խայթոցդ»** (Ա.Կորնթ. 15:55):

Աստուածաշունչը մեզի կը պատմէ Աստուածային սիրոյ անհունութեան մասին. անկէ կը սորվինք, որ Աստուած այնքան սիրած է իր ստեղծագործութիւններուն ամենէն կատարեալը՝ մարդը, որուն փրկութեան համար չէ իննայած իր Միածինը, զԱյն աշխարհ ղրկած է գերագոյն զոհաբերութեան առաքելութեամբ, որպէսզի Անոր հաւատացողները փրկուին ու արժանի ըլլան յաւիտենական կեանքին:

Ահա մեծագոյն հրաշքին ամենէն կենսատու եւ մշտանորոգ պատգամը՝ մեզի, քրիստոնէայ հաւատացեալներու:

Քրիստոսի պատգամները լոյսի ու ճշմարտութեան պատգամներ էին. անոնք մարդուն կը թելադրէին եւ այսօր ալ կը պատգամեն պարտութեան մատնել չարը, խաւարն ու անարդարութիւնը, ըլլալ լուսոյ որդիներ: Քրիստոսի յաղթական յարութիւնը պատգամ է մարդկութեան, որ ինքզինք հեռու պահէ մեղքի տիղմէն, չարիքի ճամբաներէն եւ բոլոր ունակութիւններէն՝ որոնք զինք պիտի զրկեն յաւիտենական կեանքի բարիքներէն ու զինք պիտի մատնեն կորստեան:

Եթէ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի հրաշափառ Ս. Յարութիւնը մնայուն պատգամ մը թողած է ամբողջ մարդկութեան ու նոյն հնչեղութեամբ անոր կը հասնի այսօր՝ մեծագոյն հրաշքէն մօտաւորապէս 20 դարեր ետք: Նոյն պատգամը նոյն հնչեղութեամբ կը հասնի նաեւ մեզի՝ Հայ ժողովուրդի գաւակներու, մանաւանդ, որ մեր ողջ պատմութիւնը եղած է այդ պատգամին հաւատարմութիւն եւ հետեւողական կենսագործում:

Արդարեւ, սիրելիներ, Յիսուսի յարութեամբ բոցավառած ճշմարտութեան ջահին լոյսը շուտով Հայաստան աշխարհ բերուեցաւ Անոր առաքեալներուն՝ Ս. Թադէոսի ու Ս. Բարթողոմէոսի կողմէ, արագ տարածում գտաւ մեր ժողովուրդի հոգիին ու կեանքին մէջ, ու մենք դարձանք քրիստոնէութիւնը իբրեւ պետական կրօն ընդունող առաջին պետութիւնը:

Աստուածաշունչի լոյսին տարածման եռանդն էր որ մեր պատմութեան լուսատու դէմքերը մղեց սեփական գիր ունենալու տենդին: Հայ Մշակոյթի լուսաւոր ճամբան սկիզբ առաւ նոյնիսկ Աստուծոյ խօսքին՝ Աստուածաշունչին հայերէնի թարգմանութեամբ, որ կոչուեցաւ «Թագուհի Թարգմանութեանց»:

Հայ Գիրի գիւտարար սրբազան հայրերուն ու մեր մշակոյթի Ոսկեդարը կերտող անոնց արժանաւոր աշակերտներուն շնորհիւ, Աստուած հայուն հետ հայերէն խօսեցաւ, հայուն պատգամեց կերտել քրիստոնէական իր ուրոյն կեանքը, իր նկարագիրին համապատասխան պատմութիւն: Հայերէնով կերտուած մշակոյթը դարձաւ հարստացաւ, դարձաւ ներշնչման աղբիւր՝ հայ երաժիշտին, հայ գրողին, հայ արուեստագետին, մնաց մեզ մահէ փրկող լաստն ու մեր յարութեան գրաւականը. այդ բոլորը իբրեւ անգնահատելի ժառանգութիւն ու աւանդ այսօր հասած են մեզի:

Նոյն այս ներշնչումով է որ մենք, անսալով Ս. Աթոռոյս Վեհափառ Հայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի կոչերուն, ահաւասիկ վերջին տարիները կը նուիրենք Հայ Մշակոյթին, Հայ Դպրոցին ու Հայ Լեզուին, տօնախմբելով չարիքին ու անհետացման վտանգներուն դէմ անոնց յաղթական երթը:

Սիրելիներ, մեր պատմութիւնը կերտուեցաւ դէպքերով ու հանգրուաններով, որոնք գործնական վկայութիւն էին չարիքի ու մահուան վրայ մեր Փրկիչին տարած յաղթանակին:

Բազմիցս փորձեցին մեզ հեռացնել մեր սուրբ հաւատքէն, սակայն միշտ ալ հնչեց Աւարայրի դաշտին վրայ կերտուած յաղթանակին պատգամը՝ **«Մեզ մեր հաւատքէն ոչ ոք կրնայ հեռացնել»**: Որովհետեւ յարութեան ուղեւորներս հաւատացինք ու հետեւեցանք Քրիստոսի, որ կը յուսադրեր բոլոր դարերուն գինք Տէր եւ Աստուած դաւանողներուն. **«Ե՛ս եմ յարութիւնը եւ կեանքը: Ան որ ինձի կը հաւատայ, թէպէտեւ մեռնի՝ պիտի ապրի»** (Յովհաննէս 11:25):

Բազմիցս փորձեցին անվերադարձօրէն սպաննել մեզ ու դուրս ձգել պատմութեան բեմէն, սակայն մեր ժողովուրդին հաւատքն ու կամքը միշտ ալ մեզ առաջնորդեցին յարութեան եւ ինքնակերտումի, արդարութեան ու ճշմարտութեան լոյսին ջահը աւելի՛ եւս բարձրացնելու:

Հայ ժողովուրդը, իր պատմական փորձառութիւններով, ամենէն հաւատարիմ հետեւորդը եղաւ «մահուամբ մահը զգեստելու» Ս. Յարութեան պատգամին, զայն վերածեց ազգային իւրայատուկ արժանիքի ու աւանդութեան:

Եւ մենք, այսօր ու ընդմիջտ, պիտի շարունակենք Քրիստոսաւանդ այս երթը, որ մեզի պիտի պարզելէ յաւիտենական կեանք, մեզ պիտի պահէ յաւերժութեան ճամբուն մէջ: Այս է մեր երթը: Այս է պատգամը Ս. Յարութեան այս տօնին:

Ս. Յարութեան յաղթական երթով եւ լոյսի ու արդարութեան տենչով, Չատկական մեր շնորհաւորութիւնները կ'ուղղենք Թեմիս հոգեւորականաց Դասուն, ժողովականութեան, ինչպէս նաեւ մեր կրթական հաստատութեանց, միութեանց ու կազմակերպութեանց բոլոր անդամներուն եւ մեր հաւատացեալ ժողովուրդին: Թող այս յաղթանակի տօնը վերակենսաւորէ բոլորս, ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի, եւ թող յարուցեալ Փրկիչը մեզի պարզելէ մեր հաւատքի ու յոյսի երթը յաղթականօրէն շարունակելու լուսաւոր ճանապարհը:

***Քրիստոս յարեալ ի մեռելոց
Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի***

Սիրոյ ջերմ ողջունիւ,

Աղօթարար՝

Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Առաջնորդ
Ա. Մ. Նահանգներու Արեւմտեան Թեմ

Ս. Յարութիւն, 2007

PRELATE'S EASTER MESSAGE

**THE GLORIOUS RESSURECTION IS THE TRIUMPH
OF LIGHT AND RIGHTEOUSNESS**

*“...And the women who came to anoint the body
of the Lord heard from the angel that the eternal
living had risen from the dead”
(Hymn)*

It is Easter once again and a time when Christians worldwide celebrate the Glorious Resurrection of Christ with unsurpassed spiritual joy. Once more, we recall the everlasting message of the angels who centuries ago proclaimed,

***“Why do you seek the living among the dead,
He is not here, but is risen...”*** (Luke 24: 5-6)

Each aspect of the earthly mission of our Lord Jesus Christ, but especially His Glorious Resurrection, epitomize everlasting messages which do not diminish over time but rather continue to illuminate our lives and guide us towards eternity.

Let us return for a moment to that marvelous occurrence. Let us remember the last days of the earthly mission of our Lord, which lead to the crowning moment, His Resurrection.

The triumphal entry of Jesus into Jerusalem leading up to his betrayal, arrest, trial, crucifixion, and Resurrection, comprise a series of events that together wholly express the infinite love of God toward man. The Lord had sent His only begotten Son not to condemn mankind, but to take on the burden of man's sin and to make the ultimate sacrifice, to shed His blood for the expiation of those sins and for man to be worthy of eternal life. **“God demonstrates His own love toward us, in that while we were still sinners, Christ died for us”** (Romans 5:8).

God promised salvation to mankind through His Son, our Savior. Had the mission and teachings of Christ ended with His crucifixion, the promise of the salvation of God would not have been fulfilled. However, the mission of our Lord Jesus Christ did not end on the cross. His commandments do not apply solely to our earthly lives, but rather are intended to prepare us for eternal life. Therefore, he who abides by the commandments of our Lord on earth will inherit the Kingdom of Heaven. **“Most assuredly, I say to you, he who hears My word and believes in Him who sent Me has everlasting life, and shall not come into judgment, but has passed from death into life”** (John 5:24).

“I have come that they may have life, and that they may have it more abundantly” (John 10:10).

The glorious Resurrection was the ultimate triumph of good over evil, the final triumph over death and the greatest expression of this message. Armed with the spirit of the Resurrection, man can truly face death without fear, for **“We know that we have passed from death to life”** (1 John 3:14).

The messages of our Lord Jesus Christ were those of light and righteousness, which advised man, and still advise us, to defeat evil and injustice. They advise us to steer clear of sin and all practices that will deprive us of the graces of eternal life and lead us to obliteration.

* * *

Centuries later, the enduring message of the Resurrection continues to resonate throughout the world, and especially throughout the Armenian nation. The Armenian people survived and thrived amid adversity due to our loyalty and adherence to the light of righteousness. Indeed the light of the Resurrection, which was brought to the Armenian people by the apostles Saints Thaddeus and Bartholomew, quickly spread through the hearts and minds of the people and resulted in the adopting of Christianity as the state religion, the first ever nation to do so. Moreover, the aspirations of our illuminators to spread the Gospel lead to the invention of the Armenian alphabet and the subsequent development of Armenian culture with the translation of the Bible, the “Queen of Translations”.

The culture that we inherited from our forefathers, which originated from the Armenian language, has been enriched over the centuries and has become a source of

inspiration for the Armenian musician, writer, and artist, and the basis of our existence. It is with this same inspiration that we have heeded the call of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, over the past few years to celebrate the victory of the Armenian Culture, School, and Language.

Dear Faithful,

The events and experiences our history is built upon exemplify our victory over evil and the threat of annihilation. There have been countless attempts to take our faith away but each time the ideals shaped on the field of Avarayr reinforced and reminded us that no one can take away our faith for we believe in and follow Christ and the Lord assures us, **“I am the resurrection and the life. He who believes in Me, though he may die, he shall live”** (John 11:25).

Many have tried repeatedly to massacre us and obliterate us from the pages of history. However, our faith and strength have always guided us on the path toward justice, truth and righteousness.

With our past experiences we, the Armenian people, became the most faithful adherers of “conquering death by death”, and transformed the message of the Resurrection to a national value and ideal. Today and always, we will continue on this righteous path, which will grant us eternal life.

With this spirit of the Resurrection, we extend our best wishes to our clergy, Executive Council members, parish representatives, educational institutions, sister organizations, and our faithful parishioners. May this glorious feast reinvigorate us all, whether in Armenia or the Diaspora, and may our Savior grace us with the faith and hope to triumphantly continue on our righteous path.

***Christ is risen from the dead
Blessed is the Resurrection of Christ.***

Prayerfully,

Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Western United States

Easter, 2007